Հ Ր Ա Մ Ա Ն

27 հունիսի 2022թ. Թիվ 277-Լ
ք. Երևան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ԿԱՆԽԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ԱՄՆ ԴՈԼԱՐ ԵՎ ԵՎՐՈ ԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՒՄԱՐԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կանոնադրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ս.թ. հուլիսի 6-ից Բանկի Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագների 1.27-րդ և 1.28-րդ կետերով սահմանել հետևյալ սակագները.
   - Այլ բանկերի Visa, Mastercard, American Express, ՄԻՐ և JCB քարտերով Բանկի կանխիկի տրամադրման կետերում ԱՄՆ դոլար և Եվրո արժույթով կանխիկ գումարի տրամադրում՝ 3%,
   - Բանկի կողմից թողարկված քարտերով Բանկի կանխիկի տրամադրման կետերում և Քարտային հաշիվներից ԱՄՆ դոլար և Եվրո արժույթով կանխիկ գումարի տրամադրում՝ 2%-ի և տվյալ քարտատեսակի համար Բանկի բանկոմատներում և կանխիկի տրամադրման կետերում սահմանված կանխիկացման սակագնի տարբերության չափով,
   - Այն դեպքում, երբ ֆիզիկական անձի անունով բացված անվճար կանխիկացման հնարավորություն տվող քարտի քարտային հաշվին արտարժույթի փոխանցման համար արդեն գանձվել է Բանկի Հաշվարկադրամարկղային գործառնությունների սակագնի 28.1 և 28.2 կետերով սահմանված միջնորդավճարներից որևէ մեկը, ապա Բանկի կանխիկի տրամադրման կետերում և Քարտային հաշիվներից կանխիկ գումարի տրամադրում՝
     - ԱՄՆ դոլար արժույթով – 1.5%
     - Եվրո արժույթով – 1.5%
2. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած համարել ս.թ. մարտի 31-ին ԳԳՏ կողմից տրված թիվ 145-Լ հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Hakob Andreasyan Digitally signed by Hakob Andreasyan Date: 2022.06.27 15:20:16 +04'00' **Հակոբ Անդրեասյան**